առնէ զՊատրի Պօղոսն, ի ձեռն որոյ զթուղթս առաքեաց, չատ գովելով զսա, որ էր նախագոյն ծանօթ և Փիլիպպոսին, զի լուիցէ ի բերանոյ Նորին ըզսէրն փափին առ ազգս Հայոց, և զուղղափառ հաւատոյ ճշմարտութիւնն։ Բայց յաղագս Լէօպոլսեցւոցն՝ ոչինչ յիշէ ի թղթին՝ փափն։ Պատրի Պօղոսն դառնայ ի Լէօպոլիս, և աստի տուեալ նմա Հայոց դեսպան ոմն՝ երթայ յԷջմիածին, առ կաթողիկոսն։ Բայց թէ զորպիսի պատասխանի տուեալ իցէ կաթողիկոսն, ոչ գտաք, վասն Լէօպոլսեցւոցն. զայս ունիմք ստուգիւ, զի նոյն Փիլիպպոս կաթողիկոսն զդաւանութիւն իւր առաքեաց ի ձեռն նոյն Պօղոսին առ Իննովկենտիոս փափն, 1647։ Երկարեցաւ իրողութիւնս այս, և անհնազանդութիւն Լէօպոլսեցւոցն իւրեանց արքեպիսկոպոսին՝ մինչև յամն 1653։

1646· ՌԼԵ· Ստեփանոս Լեհացի յաղատ տանէ Վարդանենց Լէօպոլսեցի, առաքեցաւ ի ծնողաց իւրոց յԷջմիածին, ուր զլեզու և զգիր Հայոց՝ զոր նախ ոչ գիտէր՝ ուսաւ բարւոք· զոր յաղագս մաքրակենցաղ վարուցն՝ Փիլիպպոս կաթողիկոսն օրհնեաց վարդապետ զնա։ Սա՝ զի հմուտ էր լատին լեզուին՝ թարգմանեաց զՑովսեփայ հին Պատմութիւնն, միայն որ ի վերայ Երուսաղեմի և Հրէից պատերազմին, զԴիոնեսիոսի Արիսպագացւոյն, զի առաջին թարգմանութիւնն էր անհասկանալի. զԳիրս յաղագս Պատճառաց՝ ի պրակս 36· զՀայելի վարուց, և զԲուրաստանն աղօթից։

1651· ՌՃ· Փիլիպպոս կաթողիկոսն յայսմ ամի զՑօհաննէս վարդապետն Արղնցի՝ այրն հանճարեղ և գիտուն՝ ի Լէօպոլիս առաքէ, ի հաշտեցուցանել և հնազանդեցուցանել զժողովուրդն՝ Նիկողայոսի արքեպիսկոպոսին. զոր և արարն իսկ, և եմոյծ զժողովուրդն յեկեղեցին, որ ընդ ամս... հեռացեալ էր ի նմանէ։

1653· ՄՃԲ· Նիկողայոս արքեպիսկոպոսն՝ գիտութեամբ մեծաւորացն իւրոց, ի յորդորմանէ ժողովրդոցն՝ որք զնա ընդունել ոչ կամէին, պատճառելով թէ բանադրեալ իցէ, գայ ի Կ·պոլիս առ Փիլիպպոս կաթողիկոսն՝ ուր յայնժամ գտանիւր, և առեալ ի նմանէ զօրհնութիւն և զկոնտակ, արարեալ նախ զգլխադրութիւնս ոմանս, որպէս ասէ Առաքել պատմիչն, և զթուղթ առ Լէօպոլսեցիս և Կամէնցացիս, յայսմ ամի 1653, ապրիլի 15, դառնայ յաթոռ իւր։ Իսկ թղթոյն օրինակն է առ իս, որոյ մասն ինչ գնեմ աստէն. « Ցուշ լիցի հոգեւոր սիրելեացդ իմոց, զի... Նիկողայոս արքեպիսկոպոսն » դիմեաց առ մեզ, և եցոյց զկատարեալ հնազանդութիւն իւր· զոր մեք ընկալաք բազում սիրով և կարի մեծարանօք, իբրեւ զհարազատ որդի· և » վերստին շնորհեցաք զիւր եպիսկոպոսական իշխանութիւնն· վասն որոյ ընկալարուք զդա՝ բազում սիրով և մեծարանօք· և յամենայն կարողութենէ հպատակ և հնազանդ լերուք զմա· և ամենայն բանի մի՛ վրդովիք փութով, այլ երկայնամիտ լերուք, և զօգուտն խորհեցարուք, » և այլն։ Յետոյ ասէ, « Որպէս մեր հոգեւոր որդի Յոհան վարդապետն ն·ւիրակն Ս·